

ԳՐԱԴԱՐԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԱՐՁԱՆԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՆԱԿԱՐ ԶՈՒԱՔՅԱՆ. Քեսապի բարբառը, Եր., 2009, 380 էջ

Նայրնի է, որ բարբառագիտության մեջ առավել կարևորվում են այն հեղափոխությունները, որոնց հեղինակները ուսումնասիրվող բարբառի կամ խոսվածքի կրողներ են, լիարժեքորեն փորձապետում են այդ միավորին և բնակվում են նույն միջավայրում: Յավոք, բարբառագիտական այդպիսի ուսումնասիրություններ հայերենագիտության արդի փուլում սակավադեպ են երևան գալիս: Սույն հրապարակությամբ հայ բարբառագիտությունը համարվել է արժեքավոր մի աշխատությամբ, որի հեղինակը նաև ազգագրագետ ու հայրենագետ է, բարբառի կրող ու հմուտ գիտակ, բնակվում է բարբառի գործածման միջավայրում:

Ն. Չոլաքյանը Քեսապի բարբառի ուսումնասիրությունը ակադ. Էդուարդ Աղայանի ղեկավարությամբ սկսել էր դեռևս Երևանի պետական համալսարանում ուսանելու տարիներից: Տասնամյակների աշխատանքի արդյունքն ամփոփվեց նախ Նալեպոմ 1986 թվին, ապա՝ 2009-ին Երևանում Գալուստ Կյուլակենկյան հիմնարկության հովանավորությամբ:

Բավական ընդգրկուն է գրքի բովանդակությունը. հայաբնակ պարամական այս տարածքի նախապարմությունից մինչև բարբառի հնչյունական ու ձևաբանական համակարգերի, ինչպես նաև բառապաշարի համակողմանի բնություն, հարուստ բառացանկեր, բանասիրական բազմաբնույթ նմուշներ:

Գրքի «Ներածություն» բաժնում ներկայացված են Նյութաային Ասորիքի հայաբնակ այդ շրջանի նախապարմությունը, բարբառի տարածման աշխարհագրական սահմանները, մնացորդաց ճակատագիրը: Այսպեղ, հիմնվելով գրավոր աղբյուրների ընձեռած պարմական վկայությունների, ինչպես և հայագի և օտար ուսումնասիրողների փաստական փյուլաների վրա, նշվում է, որ տեղաբնակ հայերը, հեղափոխ իրենց անկախության գաղափարներին, շարունակաբար ընդվզել են օտար նվաճողների դեմ: Այդ գաղափարներն էլ նրանց գոյապահպանման գերագույն ազդակներն են եղել: Թերևս այս է եղել այն մղիչ հզոր ուժը, որ Անդրիոքի և մերձակա տարածքների հայությունը միջին դարերում, խաչակրաց արշավանքների շրջանում, օգնել է խաչակիր ասպետներին թե՛ պաշտպանական, թե՛ բանակի պարենավորման գործերում:

Նաջորդող դարաշրջաններում Անդրիոքն իր մերձակա տարածքներով ձեռքից ձեռք է անցել: Այս հանգամանքը նպաստել է երբեմնի հայահոծ շրջանների աստիճանական հայաթափմանը: Իսլամական հայահալած քաղաքականությունը շարունակվեց մինչև Ի դար: Նայերն աստիճանաբար քաշվեցին դեպի լեռնային և առավել մեկուսացած շրջաններ: Ահա այս իրադարձությունների հետևանքով է, որ միջին դարերի հայահոծ բնակավայրերից ԺԹ դարավերջին պահպանվել էին միայն Բեյլանի, Սվեդիայի, Քեսապի գավառակները,

«... Լաթաքիոյ հիւսիս արեւելեան կողմը երկու մեկուսի գիւղեր՝ Արամօ եւ Դնեմիէ», ինչպէս նաեւ՝ «Քեսապի եւ Ռոմոդեսի հովիտին միջեւ թուրքմէն գիւղերու շրջանակին մէջ մեկուսացած քանի մը մանր գիւղակներ՝ Կոչի, Գոնպունա, Եամարի, Արֆալի, Վերին Թընգըրի, արդէն թրքախօս կամ արաբախօս դարձած», «Արեւմտեան Ռուճի (Ռոմոդեսի Նովիւր, Շուդրէն Նարին) նախկին հայաշատ քաղաքին մէջ իրար կից երկու գիւղեր՝ Շագուպիէ եւ Գնիէ, 19-րդ դարու երկրորդ կէսին արդէն արաբախօս» (Էջ 5): Նշվում է նաեւ, որ չնայած այլալեզու իշխող իսլամական շրջապատին, Քեսապի, ինչպէս եւ շրջակա հայաբնակ գյուղերի ներհամայնքային հաղորդակցության միակ միջոցը բարբառն է եղել: Նախկին շաքական է մի դեպք. 1910 թվականին քաղաքի շրջանի հանդեսին Քեսապի ազգային դպրոցի քննօրէնի՝ գրական արեւմտահայերէնով արտասանուած խոսքը ծնողների համար հենց քննարկում թարգմանվում է բարբառով: Շրջակա հայաբնակ գավառների հետ եւս քննադատից հաղորդակցվել են բարբառով:

Այս բաժնում Չոլաքյանն անդրադառնում է նաեւ բարբառի մասին առայսօր եղած աշխարհաբաններին, արժեքավորում դրանք. կարարում քննարկական որոշ ճշգրտումներ:

Ըստ Չոլաքյանի, բարբառը չունի ներքին քաղաքականությունը ըստ շրջանի առանձին գյուղերի խոսվածքների, իսկ անվանական ու բայական թեքման, ինչպէս նաեւ պարամական հնչյունափոխության առկա գույքաձեւություններն ու բազմաձեւությունները «... ենթաբարբառային բնույթ չունին, որովհետեւ բազմաձեւությունը ինքնին բարբառային երկույթ մըն է ու կրնայ պարսկի լոյն շրջանակի բարբառախօս բոլոր անհատներուն քով (Էջ 13):

Բարբառի բնությունը կարարված է հիմնականում համաժամանակյա հայեցակետով, ըստ լեզվական առանձին մակարդակների:

Գրքի առաջին գլուխը բարբառի հնչյունական համակարգի բնությունն է: Քննարկված են բարբառում առկա հնչույթների հնչարարական առանձնահատկությունները, նորակազմություններն այդ համակարգում եւ հնչույթավորման նոր արտահայտությունները:

«Ննչխնախօսութիւն» բաժնում իբրեւ համեմատության եզր է դիտված գրական արեւմտահայերէնը, իսկ հնչույթային համակարգի դասակարգումը կարարված է ըստ գրաբարի համապարասխան համակարգերի: Այսպէս ներկայացված են նաեւ բարբառի ձայնավորների, երկրարբառների եւ բաղաձայնների բոլոր շարքերի (ձայնորդներ, շփականներ, պայթականներ ու պայթաշփականներ) գրաբարյան բոլոր համապարասխանությունները: Նանգամանքներն քննարկված են շեշտը եւ շեշտափոխական հնչյունափոխությունները, ինչպէս նաեւ բառաթերքումների հետեւանքով քննարկված ունեցած դիրքային ու փոխադրեցական հնչյունափոխության բոլոր դրսեւորումները:

«Պարամական հնչխնախօսութիւն» բաժնում ներկայացված են գրաբարի համապարասխան միավորները եւ դրանց բարբառային բոլոր համապարասխանությունները: Բաղաձայնների գրային համապարասխանությունները քննարկված են գրերի՝ արեւմտահայերէնի արժեքով, թեւ նախապէս նշվում է, որ համապարասխանությունները դիտարկված են ըստ գրաբարի եւ արեւելահայերէնի հնչարարական առանձնահատկությունների: Եզրակացությունն այն է, որ բարբառի հիմնումն են հնչույթներից հնչույթային արժեքով հանդես եւ գալիս քառասունները, իսկ մնացածները ենթահնչույթներ կամ հնչույթների դիրքային քաղաքականներ են: Բարբառի բաղաձայնական համակարգը պայթականների ու

պայթաշփականների փեղաշաժ-փեղափոխության ենթարկված եռասրիճան համակարգ է (պարզ ձայնեղ, պարզ խուլ, շնչեղ խուլ), որը կիլիկյան միջին հայերենի համապարասխան համակարգի անմիջական ժառանգորդներից է: Բարբառի ձայնորդներն ու շփականները էական փոփոխությունների չեն ենթարկվել:

Նայ բարբառագիտության մեջ առաջին անգամ փրված են բարբառի պարզ ձայնավորների և երկբարբառների նաև գրաբարյան բոլոր հանապարասխանությունները:

«Ձևաբանություն» գլուխը, որ աշխարհի ամենաձավարուն բաժինն է (111 էջ), ամբողջովին նվիրված է բարբառի ձևակազմական առանձնահատկությունների քննությանը: Այսպես ձևակազմական բոլոր օրինաչափությունները դիտարկված են ըստ առանձին խոսքի մասերի: Մանրամասնորեն քննարկված են գոյականի թվակազմության, հոլովման և հոլովակազմության, առկայացման բոլոր օրինաչափությունները:

Քնասալի բարբառը, ինչպես Անպիոքի մերձակա փարածքների և առհասարակ կիլիկյան բոլոր հայ բարբառները, աչքի է ընկնում թվակազմ ձևային բազմազանությամբ, որոնց բաշխման ոլորտներն ունեն ձևային, իմաստային և ձևաիմաստային որոշ պայմանավորվածություն: Կանոնակարգված կարելի է համարել թերևս միայն (եար>եր)>իբ հոգնակերպի կիրառությունները, որը (ոնք>)ծնք // էօնք-ի հետ ազապ բաշխման սկզբունքով, իսկ երբեմն իբրև գուգաձևություն գործառում է միավանկ բառերի ոլորտում: Բաշխման ոլորտների որոշ պայմանավորվածություն ունեցող առավել կենսունակ հոգնակերպները դիտված են իբրև համակարգային ձևային, իսկ մեկ կամ մի քանի բառերի ոլորտում գործառողները՝ ոչ համակարգային: Ոչ համակարգային են -ուրա // -ուրաբ (ուօրջ – ուրջուրա // ուրջուրաբ), -ըրա // -ըրաբ (էօնծ – ունծըրա // ունծըրաբ), -էգ (մուօրդ-մարդէգ), -էք (կընէկ-կէնէք), -նիք (իշգէն – իշգըննիք, կէրկըրուն - կէրկըրնիք, դըրնցա // դըրնցն դըրնցնիք), -րա (պէրուն - պէրնրա, լըֆցծք – լըֆցըրա):

Ն. Չոլաքյանը կարարել է նաև թվակազմ ձևային ծագումնաբանական վերլուծություն՝ հանգելով միանգամայն համոզիչ եզրակացությունների: Այսպես հեղինակը, հակադրվելով Նրանա Պերոսյանի ստուգաբանությանը¹, ճշգրտում է բարբառի (օնք>ծ) նք/էօնք հոգնակերպի ծագումը՝ բխցնելով ոչ թե *ոնք>օնք*-ից, որը ըստ բարբառի հնչյունական օրինաչափության պիտի վերածվեր ազգակցություն նշանակող բառերի և դերանվանական հավաքականություն արտահայտող -ոնք մասնիկի, այլ «...Բարբառիս օնք(ծնք, էօնք) հոգնակերպը կազմում է -*ոնք>օնք* (ծնք, էօնք) պարմական հնչյունափոխությամբ, որ օրինաչափական է բարբառիս համար: (Ունքը գրաբարի մեջ *ն*-ով և նախորդ բաղաձայնով վերջացող բառերու յոգնակի ձևն է՝ ակն-ակունք, շուրթն-շրթունք, մասն-մասունք և այլն)»:

Ծնք, էօնք հոգնակերպով հոգնակի են կազմում «... առհասարակ զանգում ցոյց փռող գոյականները (էջ 61), ինչպես՝ ջէօր (ջուր)-ջըրէօնք, ուղ (աղ)-ւնղօնք, բօրդ (բուրդ)-բըրդօք: Ունք-ն արտահայտում է հավաքականություն, ինչպես՝ միբունք (մայրոնք>մէրոնք/մերանք), պէպունք (պապոնք), իսսունք (այսոնք>էսոնք) և այլն:

Թվակազմ ձևային ստուգաբանություններից անհամոզիչ է -ըննիք-ի բաղադրիչների (ըստ հեղինակի՝ ան+նի+եար>աններ) վերլուծությունը: Այս ձևային մեջ բուն թվակազ-

1 Տե՛ս Ն. Չ. Պերոսյան, Գոյականի թվի կարգը հայերենում, Եր., 1972, էջ 399:

միջը –նիր-ն է, որն ավելանում է (իկ>)-էկ/էօկ փոքրացուցիչ, փաղաքական ածանցումով բառերին ոչ միայն Քեսապի, այլ ընդհանրապես Անարիոքի մերձակա քարածքների բարբառներում: Այս կարգի բառերում ածանցի կ-ն –նիր հոգնակերպի ն-ի առնմանությամբ փոխվում է ն-ի և ստացվում է կրկնակ ն-ով բաղադրյալ մի ձև. այլ կերպ՝ նվազական, փաղաքական բառերը ստանում են

(-ներ)>նիր հոգնակերպ: -Ըննիրը-ը, այսպիսով, բաղադրված՝ (իկ>)էկ/էօկ ածանցից և (-ներ>)նիր հոգնակերպից:

«Նոյվումներ և հոյվիչներ» ենթաբաժանում ներկայացված են հոյվման փախերն ու դրանք պայմանավորող իմաստային, ձևային և ձևաիմաստային բոլոր գործոնները, հոյվիչների նյութական բոլոր դրսևորումները: Նոյվական հարացույցները փոխված են ըստ առանձին հոյվումների: Առանձնացված են հոյվական անորոշ և որոշյալ առման հարացույցները, ընդ որում արտաքին բոլոր հոյվումների համար իբրև անորոշ առման ընդհանուր հոյվիչ նշվում է նաև *ը*՝-ն (շեշտակիր *ը*-ն է այն, որը շեշտակիր ի-ի բարբառային համապարասխանությունն է -Գ.Ն.): Այս բոլորը ներկայացված են հիմնավորող համապարասխան օրինակներով:

Երկրորդ գլխի *Բ* և *Գ* մասերում քննարկվում են ածական և թվական անունները՝ իրենց իմաստային ու ձևակազմական բարբառային բոլոր դրսևորումներով:

Նշվում է, որ բարբառում ածականը հարաբերականների հատուկ համակարգ չունի: «Առարկայի ծագման, սերման և պարկանելիության յարկանիշները կ'արտայայտուին գոյականի սեռական և գործիական հոյվումներով: Օր. լառաուն ծնողէկ (լեռնային ծաղիկ), կինկը՝ ըռռուօխ (կանացի հագուստ), փնիկուօն դրգուօ (փայտեայ դգալ), ըրկէթուօն դօռ (երկաթեայ դուռ), իսկուօն մէննուց (ոսկեայ մստանի) և այլն» (էջ 84):

Որակական ածականը բարբառում եւս հանդես է գալիս համեմատության երեք աստիճաններով:

Բաղդարականն արտահայտում է առարկաների և երևույթների համեմատելի հատկանիշի դրսևորման առավելություն, հավասարություն, նվազականություն, որոնք դրսևորվում են շարահյուսական միջոցներով և համապարասխան բառ-մասնիկներով:

Գերադրական աստիճանը բացի ածականին *քան գրմմըն* և *քան գալէք* բառ-մասնիկների նախադաս հարադրումից, բարբառում կարելի է արտահայտել նաև *էն, օնկը, օնկըր* նախադաս մասնիկներով. օր. «... օնկը մինձ, օնկըր մինձ, ըմմընիէն մինձ, էն մինձ, էնը մինձ (ամէնէն մեծ)» (էջ 85):

Թվականների համակարգում առանձնացված են *քանակական, դասական* և *չափական* խմբեր: Բանականները բարբառում եւս լինում են *քացարձակ, քաշխական* և *կոպորական*: Բացարձակ բանականները ընդհանուր հայերենի բարբառային համապարասխանություններն են, բացի յոթանասուն, ութսուն, իննսուն տասնավորներից, որոնք փոխառյալ են թուրքերենից (յըթմըշ, սմբգան, դօղգան. ըստ հեղինակի գրադարձության՝ երթմըշ, սմբգան, փօկգան): Բարբառում յուրահատուկ կիրառությամբ է նաև հանդես գալիս մէկ>միէգ թվականը. բացի իր հիմնական իմաստից ու կիրառություններից, այն նշանակում է նաև *հար* և հանդես է գալիս «... թուականներու և չափ ու քանակ արտահայտող բառերու իբրև որոշեալ, օր.՝ ըրկը միէգ (երկու հար), քան՝ միէգ/քէն միէգ (քանի՛ հար)» (էջ

86): Դասականներից բնիկ կազմություն է միայն առաջին-ը, առջը՝ (իբրև որոշիչ), առջա (իբրև սպորոգյալ), առջեն(ը) (փոխանուն անձ կամ առարկա): Երկրորդ և երրորդ թվականները փոխառություն են թուրքերենից՝ իքինճը, ուչունճը: Մյուս դասականները կազմվում են թուրքերենից փոխառյալ –ինճը (ինճա, ինճեն/ը) վերջածանցով:

Չափական թվականները կազմվում են բացարձակ քանակականներից –ին ածանցով: Իմաստով համարժեք են գրական լեզվի –ոց ածանցով բաղադրված ձևերին: Օր. միլեզգին (մեկնոց), բրգուքին (երկուսնոց), բրգին (երեքնոց), չուզգին (չորսնոց) և այլն:

Նեղինակն իրեն բնորոշ բարեխղճությամբ և հանգամանորեն քննարկել է նաև դերանունները՝ իրենց իմաստային ու ձևակազմական բարբառային բոլոր դրսևորումներով: Չորաբայանը դերանվանական համակարգում առանձնացրել է հեպտեյալ տասը խմբերը՝ անձնական, անդրադարձ, փոխադարձ, ցուցական, հարցական, հարաբերական, որոշյալ, ժխտական, անորոշ, ստացական:

Անձնականները և ցուցականները հանդես են գալիս դիմային առնչությունների եռանդամ հակադրությամբ, թեք ձևերը դրսևորում են և՛ գրաբարյան, և՛ բարբառային, և՛ նորհայերենյան հայրկանիշներ: Անդրադարձ դերանունները բաղադրյալ բառեր են, որոնք չունեն ուղղականի ձևեր. կազմված են անձնականների ուղիղ և թեք ձևերի համադրությամբ (խազե-մինբըզմի, դեօնգքի-դեօզգձի, ենբզենբ-իրինբզերինբ), հոլովվում է սրանց միայն երկրորդ բաղադրիչը: Շարահյուսական մակարդակում հանդես են գալիս միայն խնդրային գանազան գործառնություններով: Նարցական և հարաբերական դերանունները հիմնականում ընդհանուր հայերենի համապատասխան միավորներն են՝ բարբառային համապատասխանություններով: Առանձնանում են իրանիշ դասի չէ՞ (ի՛նչ), չըվա՞ (ինչո՞ւ) և այս վերջինից բաղադրված չըվեօ՞ւրը (ի՛նչ պայմանով, ինչի՞ վրա, ի՛նչ գրավով...), որոնք դիվովում են իբրև իրանական փոխառություններ:

Որոշյալ, անորոշ և ժխտական դերանունները ևս ընդհանուր հայերենի համապատասխան արմատների բարբառային դրսևորումներ են: Ժխտական դերանուններում իբրև ժխտական բառ-մասնիկներ գործառնում են թուրքերենից փոխառյալ *նա* - և *հիչ*- բաղադրիչները. *նա* միլեկ բուն (ոչ մի բան), *հիչբուն* (ոչինչ, ոչ մի բան):

Իբրև առանձին խումբ է ներկայացված նաև ստացականը, որը անձնական դերանվան սեռական հոլովաձևի փոխանուն կիրառությունն է՝ անվանացված **ը** հոդի միջոցով: Ինչպես առհասարակ հայերենի բոլոր դրսևորումներում, այս բարբառում ևս որոշիչ հոդը ստացել է ուղղականի հոլովակազմիչի ձևաբանական արժեք. «Օր. իմ ծուօռը ծաղկուօծի (իմ ծառը ծաղկած է), բայց իմը ծաղկուօծի (իմը ծաղկած է)» (էջ 109):

Այս առանձնացումը, կարծում ենք, հիմնավորված չէ:

Աշխատանքի այս բաժնում հեղինակը անդրադարձել է նաև դերանվանական մի յուրահատուկ իմաստավորման, որը դիվոված է իբրև ցուցականության իմաստի նոր արտահայտություն: Խոսքը **զ** և **խ** նախդիրների վերաիմաստավորման մասին է (ըստ հեղինակի ընկալման): Երևույթը գրավել է այս տարածքների բարաբառներն ուսումնասիրողների ուշադրությունը²:

2 Տե՛ս Ն. Աճառյան, Կիլիկիայի բարբառը, Եր., 2003, էջ 478-479, Տ. Անդրեասյան, Սվեդիայի բարբառը, Եր., 1967, էջ 82-85, Ա. Ղարիբյան, Նայերենի նորահայտ բարբառների մի նոր խումբ, Եր., 1958, էջ 15,55-56, Գ.

Զ-ն այս բարբառներում հայցականի հոլովակազմության մեջ պահպանել է իր կենսունակությունը և գրաբարյան արժեքը, այն որոշյալության ցուցիչ է: Նիշյալ իմաստավորման մեջ այն երբեք անկախաբար չի գործառնում, միշտ **ի**-ի և նրա բարբառային տարբերակների (զա, գը, զի և այլն) հետ է հանդես գալիս, և միշտ՝ իբրև որոշյալ ուղիղ խնդրի նախդիր, **առանձին ձևությո՜ւն**:

Անկախ, ինքնուրույն միավորը **ի**-ն է, որը և արտահայտում է դերանվանական իմաստը: Առաջին անգամ այս **ի** տարրի իրական արժեքը նկատել է Արարադ Ղարիբյանը Արամյի բարբառի ուսումնասիրության առնչությամբ: **Զ** նախդիրի կիրառությունների մասին խոսելիս Ղարիբյանը նկատում է, որ «...եթև ստորոգյալն ընկնում է ուղիղ խնդրից հետո, ապա ուղիղ խնդիրը ստանում է **զ** նախդիրը», բայց ստորոգյալից հետո նույնպես դրվում է այդ նախդիրը, բայց ինչ-որ **ի** դերանվան վրա, որը ստանում է «զա» ձևը. «Ըիս զամ գամու-գա բառըցնեմ գա-ես իմ գավակին պառկեցնում եմ»:

Արդյոք այստեղ մենք պահպանված չունենք հնդեվրոպական ցուցական դերանունների «*i*» արմարը (Արամյի բարբառի բաց վանկում «ի»-ն վերածվում է «ա»-ի)³: Այս դերանունը Ղարիբյանն անվանում է «ցուցական-անձնական դերանուն երկրորդ դեմքի համար, երբ կարիք է զգացվում գործածելու իբրև ուղիղ խնդիր («զնա» կամ «զայն» իմաստով). օրինակ՝ ըիս բակնազա -ես համբուրեցի նրան»⁴:

Բարբառային այս եզակի և խիստ յուրահայտիկ դերանվանական տարրին անդրադարձել ենք նաև մենք «Սվեդիայի բարբառը» ուսումնասիրության մեջ: Նշել ենք այս դերանվան բոլոր գործառնությունները (գործողության կրող, միջոց, տեղ, հանգում և այլն), միաժամանակ ընդգծել, որ **ի** *դերանունն արտահայտում է միայն մասնավորման իմաստը՝ առարկայական զանազան վերաբերություններով*: Նկատի ունենալով նրա արտահայտած այդ ընդհանուր իմաստը՝ այն անվանել ենք *մասնավորման դերանուն*: Իր գործառնական արժեքով որոշիչ **ը**, **և** և ստացական ու դիմորոշ **ս**, **դ** հոդերի հետ այն դրվում է նույն կարգի մեջ և հանդես է գալիս իբրև առկայացման յուրահայտիկ միջոց⁵:

Ն. Աճառյանը դերանվանական այս ձևը դիտում է իբրև զիդօ, զինօ (այդ, այն) ցուցականների համառոտություն, Անդրեասյանը (որին հետևում է և Չոլաբյանը)՝ իբրև **զ** և **ի** նախդիրների վերաիմաստավորում, Ղարիբյանը՝ իբրև անձնական-ցուցական ուղիղ խնդրի արտահայտիչ երկրորդ դեմքի համար:

Ի դերանունը ծագումնաբանորեն և իր իմաստային գործառնություններով *չի նույնանում* ո՛չ **Զ** և **ի** նախդիրների, ո՛չ էլ զիդօ, զինօ (իդու, ինու) ցուցականների հետ, ունի միանգամայն ինքնուրույն իմաստ ու գործառնություններ, ուստի *այն դերանվանական սակախ ձև է*: Ունի առարկայականության իմաստ, հանդես է գալիս դերանվանական մարնանշական, ցուցական բոլոր գործառնություններով, կապվում է *միայն* որոշյալության զադափարի հետ, դրվում է արդեն առկայացված, որոշակիացված անձերի ու առարկաների անվան փոխարեն: *Այն դերանվանական առկայացուցիչ է*: Այս **ի** մասնավորման դերանվան

³ Նանյան, Սվեդիայի բարբառը, Եր., 1995, էջ 107-110:

⁴ Ա. Ղարիբյան, անդ., էջ 55:

⁵ Անդ:

⁶ Տե՛ս Գ. Նանյան, անդ., էջ 66-67, 107-110:

ծագումը թերևս հնարավոր է կապել դերանունների իրանիշ դասի /*h* արմապական պարբի հետ (գ-/*h*, գ-/*h*-նչ, /*h*-մն, /*h*-նչ), որն այս պարածքում պահպանվել է արմապական ձևով, ինչպես անձնանիշ դասի *n*²-ն (ո-մն, ո-ք) գրաբարում ևս որոշ բարբառներում:

Այս բաժնում որոշ վերապահությամբ ենք մտքենում ցուցականների ըստու//խտու, իպու, ինու շարքի՝ Չոլաբյանի ստուգաբանությանը: Նիմնավորված չէ այս դերանունների –սու, –պու, –նու բաղադրիչներն ուղղակի հնդեվրոպական սո, դո, նո նախահիմքերից բխեցնելը: Եթե այս, այդ, այն-ը օրինաչափ հնչյունափոխությամբ կարող էին դառնալ իս/ըս-, իպ-, ին-, ապա պարզաբանված չէ ու>ու անցումը բաց վանկում, ինչպես նաև դո>պու, նո>նու հիմքերի դ>ք-ի և ո-ի անկումը: Թերևս ավելի համոզիչ կլինեք սրանք բխեցնել սա, դա, նա-ից, ուր ա>ու անցումն այս դիրքում միանգամայն օրինաչափ է (այս>իս/ըս+սա>սո):

Թերվող խոսքի մասերի շարքում, բայական համակարգից առաջ քննարկվում են բարբառի կապերը: Ըստ շարադասության բարբառում ևս դրանք լինում են նախադրություններ և երադրություններ, իսկ ըստ շարահյուսական կիրառությունների և ձևակազմական հարկանիշների՝ իսկական և անիսկական: Նախադրությունների առանձին խումբ են դիտվում և՛ կենսունակ **գ**, **ի** նախդիրները, և՛ «միայն որոշ շարքեր ներկայացնող բառերու մեջ բարացած նախդիրներ, որոնք մեծ մասով կը շարունակեն պահել իրենց յարաբերության իմաստը՝ ի, դ, ընտ, դիբ և այլն» (Էջ 111): Երադրությունները հիմնականում անիսկական կապեր են. բացառություն է միայն *հ՛նուր* կապը, որը «... միսներուն պէս անկախ գործածուիլ, յոգ առնել և հոլովուիլ չի կրնար» (Էջ 116): Քննարկված են կապերի խնդրառության, շարադասության, իմաստային բոլոր օրինաչափություններն ու դրսևորումները:

Մենագրության երկրորդ գլխի ամենաընդգրկուն բաժինը բարբառի բայական համակարգի քննությունն է: Նախ ներկայացված են բայակազմության և բայական հիմքակազմության օրինաչափությունները: Տարբերակված են խոնարհման երկու՝ ներկայի և կապարյալի հիմքերը՝ իրենց կազմության օրինաչափություններով և գործառնան ոլորտներով: Նշվում է, որ գրաբարի ներկայի հիմքակազմ ածանցներից բարբառը պահպանել է միայն *ն* սուկաձանցը: Չ-ն կա՛ն ընկել է, կա՛ն կորցրել է իր հիմքակազմիչ ձևաբանական արժեքը, ինչպես՝ փախչիլ>փախիլ, թոչիլ>թոռիլ, հանգչիլ>հ՛նչիլ (կապարյալը՝ հ՛նչիծու):

Ն սուկաձանցի կրկնություն է դիտված գյրանեկ>կ՛րննիլ, մյրանեկ>մ՛րննիլ բայերի *նն*-ն: Այս կրկնակ ու-ն իրականում րն>նն փոխադրեցական հնչյունափոխության (առնմանություն) արտահայտություն է: Նիմնավորված չէ պոռալ բայը բառաչել-ից բխեցնելը, սրանք պարբեր բայեր են: Բառաչել>պառաչիլ-ի մեջ ևս առկա է աչ>չ ածանցի հիմքակազմ արժեքի չեզոքացում:

Այնուհետև քննարկված են բայի անդեմ ևս դիմավոր ձևերը: Դերբայները բարբառում յոթն են՝ անորոշ, պարագայական, ապառնի, հարակապար, վաղակապար, ենթակայական և ժխտական: Բայի ելակերպային ձևը՝ անորոշ դերբայը, որը հեղինակն անվանում է բայանուն, միասնականացրել է իր կազմությունը. այն հանդես է գալիս միայն –իլ վերջավորությամբ: Անորոշ դերբայը վերացրել է բայերի միավանկությունը՝ բառասկզբին **ու** ածական մասնիկի հավելումով (լալ>ուլիլ, գալ>ուլիլ, իսկ րալ-ը՝ րվիլ, ըլ-ի հավելման դեպքում այն կնույնանար ուրել>ուրիլ բային, ուստի րալ-ի բարբառային ձևը կազմվել է րու- հիմքից):

Բարբառային նորակազմություն է **պարագայական** դերբայը:

Այն ունի երկու ձև, որոնք կազմվում են -Էօքը և -նիքան մասնիկներով: -Էօքը մասնիկով ձևերում «...հիմնական է գործողության պայմանի կամ գրառի իմաստը, ինչպես՝ շուրփիլէօքը (շուրփիլ՝ վազել-Էօքը, վազելու վրա դրված պայմանով), խումիլէօքը (խումիլ-Էօքը՝ խմելու գրառով կամ պայմանով)» և այլն (էջ 120):

Դերբայական այս ձևը նախադասության մեջ հանդես է գալիս որպես պայմանի պարագա. -նիքանով կազմված բայաձևն արտահայտում է համակարար դերբայի իմաստը. համարժեք է արևելահայերենի -ելիս, -ալիս-ով ձևերին, նախադասության մեջ գործառնում է իբրև ժամանակի պարագա:

Ապառնի իդերբայը ևս բարբառում ունի երկու արտահայտություն՝ անորոշ դերբայ+ա (խումիլա, ուրիլա, ադիլա...) և անորոշ դերբայ+էք (խումելէք, ուրիլէք, ադիլէք...): Երկրորդ ձևը ըստ էության բայանվանական կազմություն է, ինչպես ճիշտ կերպով նկատում է և հեղինակը: Դիմավոր ձևերի կազմությանը մասնակցում է միայն առաջինը, որը գրական հայերենի կարարելի դերբայից փոխառվում է իր նոր իմաստավորումով և գործառնում է միայն օժանդակ բայի հետ՝ կազմելով սահմանական եղանակի երկրորդ ապառնի ժամանակաձևը:

Մյուս դերբայները արևմտահայերենի բարբառային համապարասխանություններն են և՛ կազմության օրինաչափություններով, և՛ շարահյուսական կիրառություններով:

Խոնարհման փիպերն ըստ խոնարհիչների փոքրերակվում են դիմավոր ձևերում: Այդ փիպերն են՝ առաջին (ի<ե. հա գրբիմ), երկրորդ (է<ի. հա սուրվեմ), երրորդ (ու//մ<ա. հա ադում) խոնարհումները, որոնք գրաբարի բայական լծորդությունների բարբառային վերակազմություններն են:

Օ (<ու) խոնարհումը (ըստ հեղինակի՝ չորրորդ) բարբառում ներկայանում է միայն թուղիլ (սահմանական ներկա, I դեմք՝ հա թուղօմ) բայով, որի հրամայականի մաշված ձևը՝ թըղ, գործառնում է նաև իբրև ըղձականի եղանակից:

Տրված են նաև բարբառի խոնարհիչների գրաբարյան բոլոր համապարասխանությունները:

Եղանակային ձևերը, ըստ Ն. Չոլաբյանի, բարբառում վեցն են՝ սահմանական, ստորադասական, պայմանական, ըղձական, հարկադրական, հրամայական:

Սահմանական եղանակի բայաձևերը ըստ կազմության լինում են պարզ և բաղադրյալ: Պարզ ժամանակաձևերն են՝ ներկա, անցյալ անկարար, բացարձակ ապառնի, անկարար ապառնի, անցյալ կարարյալ, պարմողական անցյալ: Բաղադրյալ բայաձևերն են՝ երկրորդ ապառնի ներկա, երկրորդ ապառնի անցյալ անկարար, հարակարար ներկա, հարակարար անկարար, վաղակարար ներկա: Այս բայաձևերի մեջ զուր բարբառային նորակազմություններ են *պարմողական անցյալը* և *երկրորդ ապառնին*: Պարմողական անցյալը կազմվում է խոնարհվող բայի անցյալ կարարյալի համապարասխան դիմաթվանիշ ձևերով և օժանդակ բայի անցյալի եզակի երրորդ դեմքի հարադրությամբ: Այսպես առկա է անմիջական անցյալի դրսևորում մի անցյալ ժամանակակերպի հարաբերությամբ: Նեղիմակն այս բայաձևի իմաստային հիմնավորումը չի փվել: Ցանկալի կլիներ, որ համապարասխան օրինակներով որոշակիացվեին բայական այս նոր կազմավորման իմաստն ու գործառնության ոլորտները:

Երկրորդ ապառնի ժամանակաձևեր կազմվում է ապառնի դերբայի առաջին ձևի (անորոշ դերբայ+ան) և օժանդակ բայի ներկայի և անկարարի խոնարհված ձևերի միջոցով: Յուրյ է փալիս «... որոշապէս կարարելու սահմանում գործողութիւն մը, ինչպէս՝ պուօրը փըլլիւնի (պարը փլելու վրայ է. նկարի ունի պարին ուռեցքը, ճեղքերը և այլն), իէշը սէկիլ անի (էշը սարկելու վրա է. նկարի ունի անոր ծանրօրէն հիւադ վիճակը), ուրթիւնիս (երթուալ վրայ ես. նկարի ունի ժամանակը), խօսակցին պարբասութիւնը և այլն» (էջ 121):

Իբրեւ ինքնուրույն եղանակ է առանձնացված սպորադասականը, որը գրաբարի սահմանական ներկա և անցյալ անկարար ժամանակների բարբառային համապարասխանությունն է: Այն բարբառում գործառում է նաև որպէս դիմավոր հիմք՝ սահմանական ներկա և անցյալ անկարար, ըղձականի, պայմանականի և հարկադրականի ապառնի և անցյալ բայաձևերի կազմություններում:

Այս բաժնում քննարկված են նաև բայական խոնարհման բոլոր գուգաձեւությունները, զարպտողությունները, բայի ժխտական և՛ դիմավոր, և՛ անդեմ ձևերի կազմությունը և բարբառի պակասավոր բայերը:

Ներկայացված են բարբառի չթերվող խոսքի մասերը (մակբայ, շաղկապ, ճայնարկություններ, եղանակավորող բառեր)՝ իրենց իմաստային և բառակազմական բոլոր առանձնահատկություններով:

«Բառագիտություն», գլուխը ունի երկու բաժին՝ Ա. Բառապաշար և Բ. Բառակազմություն: Առաջին բաժնում քննարկված են բարբառի բառապաշարի ծագումնաբանական շերտերը՝ բնիկ և փոխառյալ: Բնիկ բառերի մեջ փարբերակված են գրաբարից բարբառին անցած ընդհանուրահայերենյան⁶ և բարբառային բառերը: Բարբառային են դիվաված՝ ա. Նայկազյան բարառանից դուրս մնացած բոլոր բնիկ բառերը, բ. գրաբարյան այն բառերը, որոնք թեև ինքնուրույն կիրառություն չունեն բարբառում, բայց հանդես են գալիս բարդությունների մեջ և գ. այն պարզ բառերը, որոնք գրաբարում միայն բաղադրությունների մեջ են պահպանվել, իսկ բարբառում գործառում են անկախաբար: Բառապաշարի փոխառյալ շերտում առանձնացված են արաբերենից, թուրքերենից և արևմտաեւրոպական լեզուներից կարարված փոխառությունները: Տարբերակված են նաև սրանց հին և նոր, անմիջական և միջնորդավորված դրսևորումները:

Նաջորդ բաժինը բարբառի բառակազմական առանձնահատկությունների քննությունն է: Այսպեղ առաջին՝ «Պարմական բառակազմություն» հատվածում բառակազմական օրինաչափություններ են դիվաված պարմական հնչյունափոխության գուգաձեւությունների՝ ձևերից յուրաքանչյուրի և գրաբարյան քարացած բառաձևերի նոր իմաստավորումները: Այսպէս օրինակ՝ «դադար > դադար // դէդուօր, առաջինը՝ «քիչ առաջ», երկրորդը՝ «հանգիստ, դադար». փակ>փուօկ/փուօք, առաջինը՝ «փակ», երկրորդը՝ «ծառի կոճղ», ինչպէս՝ բըվկը՝ փուօք՝ բեւեկնի կոճղ, ցողունին վարի մասը արմապով հանդերձ, նաև՝ «փունկ», ինչպէս՝ բըկգը՝ փուօք խընծիքինն երկու փունկ խնձորենի, նաև՝ «ծալք», ինչպէս՝ բըկը՝ փուօք բըղուօլ՝ երկու ծալք եղալ, փուօք փէքէն՝ ծալքը ծալքին. վերջին պարագային կրնայ նաև «ծայր» իմաստով գործածուիլ» (էջ 186):

⁶ Այս դեպքում հիմք է ընդունել «Նոր բառգիրք Նայկազեան լեզուի» (Երեւան 1979-1981) բառարանը:

Քարացած ձևերի նոր իմաստավորումներ են՝ իրիվզուն (<իրիվզան>-ընթրիք, վաղվին (<վաղ-ուան>-նախաճաշ, կիսելվեօր (<կէս-աուր>-ճաշ և այլն:

Նաջորդ հարվածներում քննարկված են իսկական և անիսկական բարդությունները՝ իրենց կառուցվածքային բոլոր դրսևորումներով, ինչպես և ածանցումը՝ բառակազմական հիմքերի և ածանցների հնարավոր բոլոր գուգորդումներով: Բառակազմական արժեք է վերագրված նաև վերածման-դառնալիության –ըրր-(<ար-արել) և բազմապարկական ըրր, ըր, ր, րըր, կըր, կըրր, ըշր բայածանցներին:

«Քեսապի բարբառը» մեկագրությունը արժեքավորվում է նաև ներկայացված հարուստ բառացանկերով (գրաբար-բարբառ, անձնանուններ, բարբառայնացած տեղանուններ) և բարբառային ու փոխառյալ բառերի բառարաններով, որոնք հարուստ նյութ կարող են մտարկարարել հայերենի համեմատական բարբառագիտությանը, համահայերենյան բարբառային բառարանի հետագա համալրմանը, ինչպես նաև հայերենի բառապաշարային տեղաշարժերի պարմության ամբողջացմանը:

Աշխատանքի վերջին մասը՝ «Յանկուած»-ը, հարուստ է բանահյուսական բազմաբնույթ ու բազմաժանր նյութերով, որոնք առավել ևս ընդգծում են նրա նաև ազգագրական ու բանահյուսական մեծ արժեքը:

Վերջում կամենում ենք հեղինակի ուշադրությունը նորից հրավիրել հիմնավորող օրինակների և բարբառային նմուշների գրադարձմանը: Յանկալի կլինեք, որ հեղինակը առաջնորդվել հայ արդի բարբառագիտության մեջ ընդունված գրադարձման սկզբունքներով և բարբառի հարկապես բաղաձայնական համակարգը ներկայացնելիս առաջնորդվել ոչ թե «ընթերցողներու որոշակի շրջանակ մը» նկարի ունենալով, այլ աշխատանքը գիտական հասարակայնությանը ներկայացնելու և հավաքված հարուստ նյութը գիտական շրջանառության մեջ դնելու շահագրգռությամբ:

Իր ամբողջության մեջ Նակոբ Չոլաբյանի «Քեսապի բարբառը» մեկագրությունը լուրջ ներդրում է հայ բարբառագիտության մեջ: Արված մի քանի դիտողությունները պարզապես հեղինակի ուշադրությունը այդ երևույթներին ուղղելու և դրանց շուրջը նորից մտածելու միտում ունեն և բնավ չեն սպվելու այն մեծ և շնորհակալ աշխատանքը, որը մեծ նվիրումով ու ջանադրությամբ կատարել է նա: Աշխատությունը կարող է օգտակար լինել և հարուստ նյութ մտարկարարել հայ բարբառագիտությանը, հայերենի պարմությանը, հայ բանահյուսությանը զբաղվող յուրաքանչյուր մասնագետի:

Ուղջունելի է նման յուրաքանչյուր ուսումնասիրության հրապարակումը, որը մեր ազգային մատունքների յուրահատուկ պահպանություն է և փոխանցում սերունդներին:

Յանկանք և հուսանք, որ ազգագրության ու բանահավաքման այս նվիրյալ ժամանակ և հնարավորություններ գտնի՝ հավաքելու և ուսումնասիրելու նաև Ջրսրը-Շուդուրի շրջանի հայաբնակ Արամո, Ղընեմի, Ղընեյ, Յագուրի գյուղերի ազգային ավանդույթներն ու ավանդագրույցները, նաև՝ արդեն վերացման եզրին եղող բարբառի վերջին փշրանքները:

ԳԱՂԹՈՒՆԻ ՆԱՆԱՆՅԱՆ
Բանասիրական գիյ. թեկնածու